

ԶԻՍ ՄԻ ԹՈՂՈՒՐ ՏԷՐ

Բացակայութիւնը հոգիիս մէջ
Դէպի անդունդին առաջնորդեց զիս...
Ի զուր փորձեցի գանձերով յաւերժ
Լեցնել հոգիս, վա՛յ մեղաւորիս...:

Ունեցայ պահեր ուր թագը զլսիս
Պերճօրէն շողաց, եւ ի՛նչ վայելքով...
Ուր երկար ժամեր սիրտըս ու հոգիս
Ձեռք ձեռքի տուած գացին քովէ քով

Նիւթին ետեւէն, հնազանդ գերի:
Բարեկամ մարդիկ քովերէս անցնող
Ի՞նչ էին 'թէ ոչ շուքե՛ր այս կեանքի...
Խոտի պէս ապրող, խոտի պէս մեռնող:

Բացակայութիւնը հոգիիս մէջ
Զիս դարձուց գերի նիւթեղէն կուռքի
Ու զինովցայ ես այս շռայլութեան մէջ...
Սակայն մինչեւ եր՞բ, եր՞բ, ըսէ՛ ինծի...:

Բացակայութիւնը, ո՛հ, այս զիշեր
Զիս քշեց տարաւ դէպի անապատ
Ու փոխան գանձի բռնեցի աւազ...
Սակայն սրտաբեկ փնտռեցի ընկեր...:

Բացակայութիւնը իմ մահըս էր...:

Անապատի այս անհունութեան մէջ
Զիս մի՛ թողուր, Տէր...:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ